



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՄԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ԿԵՆՏՐԱԼԻՆ ԵՐԱԿՐՈՆՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ԿԵՆՏՐԱԼԻՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՉԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

15 ղեկավարների

Կորեայի Հանրապետության նորանշանակ դեսպանին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Կորեայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Պակ Ռո Բյոկին (նստավայրը՝ Մոսկվա)։

Նորին Սրբությունը, Նշանակման առիթով շնորհավորելով դեսպանին, կարեւոր համարեց, որ երկու պետությունների համար փոխհարաբերությունների նոր շրջան է բացվում, ինչի արդյունքում պիտի զորանան նաեւ միջմշակութային ու միջկրոնական կապերը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Կորեայի եկեղեցիների հետ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի համագործակցությանը։ Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը վերհիշեց 2013 թ. Կորեայի Բուսան քաղաքում անցկացված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովին բերած իր մասնակցությունը եւ շփումը Կորեայում գործող Զրիստոնեական Եկեղեցիների հետ։

Իր հերթին Կորեայի դեսպանը վստահեցրեց, որ պաշտոնավարման ընթացքում կփորձի լավագույն կերպով նպաստել հայ-կորեական բարեկամական հարաբերությունների ընդլայնմանն ու արդյունավետ գործակցության ամրապնդմանը։

Վերջում Նորին Սրբությունը պրն Պակ Ռո Բյոկին՝ Հայաստանում իրականացվելիք դիվանագիտական առաքելությանը բարի արդյունավորում մաղթեց։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը։

17 ղեկավարների Հունաստանի ռազմականության նախարարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի Հանրապետության ազգային պաշտպանության նախարար Պանոս Կամենոսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի եւ ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց երկու երկրների Պաշտպանության նախարարությունների միջեւ ձեւավորված համագործակցությունը՝ հույս հայտնելով, որ այն պտ-

ղաբեր կլինի եւ կնպաստի երկու բանակների հզորացմանը եւ հմտությունների առավել զարգացմանը։

Վեհափառ Հայրապետն ի մասնավորի անդրադարձավ պատմության ընթացքում հայ եւ հույն ժողովուրդներին բաժին ընկած դժվարություններին եւ այսօրվա մարտահրավերներին։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը խոսեց ՀՀ-ում Հունաստանի դեսպանատան հետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ջերմ հարաբերությունների մասին, որի աջակցությամբ Մայր Աթոռի միաբաններին կրթաթոշակներ են հատկացվում՝ Աթենքի Աստ-

վածաբանական համալսարանում ուսումը շարունակելու համար։

Նախարար Պանոս Կամենոսը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ ջերմ ընդունելության համար, անդրադարձավ երկու ժողովուրդների պատմական անցյալին եւ երկու երկրների՝ մասնավորապես ռազմական ոլորտում Պաշտպանության նախարարությունների միջեւ ներկայիս ձեւավորված սերտ գործակցությանը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ նախարարը խոսեցին նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Հույն Ուղղափառ Եկեղեցիների ջերմ հարաբերությունների մասին։ Այս առիթով Վեհափառ

Հայրապետը գոհունակությամբ տեղեկացրեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի եւ սրբալույս Մյուռնոսի օրհնության կապակցությամբ Մայր Աթոռում կազմակերպված միջոցառումներին Հույն Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչների մասնակցության եւ Հայ Եկեղեցուն ու ժողովրդին բերած գորակցության մասին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց նաեւ ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդության գործունեությունը։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը։

22 ղեկավարների

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Ջուդիթ Ֆարնվորթին։

Նորին Սրբությունը, Նշանակման առթիվ շնորհավորելով վերջինիս, մասնավորապես անդրադարձավ երկու երկրների, ինչպես նաեւ Հայ ու Անգլիկան Եկեղեցիների միջեւ առկա հարաբերություններին՝ գոհանակությամբ արձանագրելով նաեւ այդ կապերի ամրապնդման գործում Մեծ Բրիտանիայի հայ համայնքի ունեցած կարեւոր դերակատարությունը։

Զրույցի ընթացքում խոսվեց հայ ժողովրդի կյանքում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկե-

ղեցու ստանձնած ազգապահպան առաքելության, Հայոց ցեղասպանության եւ խորհրդային տարիներին Հայ Եկեղեցու կրած ծանր կորուստների եւ ներկայիս մարտահրավերների մասին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեսպանին ներկայացրեց Մայր Աթոռի կողմից իրականացվող կրթական, սոցիալական ծրագրերը, ինչպես նաեւ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների ձեռնարկած քայլերը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը։

Հոգեհանգսյան արարողություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Դեկտեմբերի 20-ին Միածնաեջ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ։

Պատարագին եր Մայր Աթոռի եպիսկոպոսաց ժողովի գրասենյակի տնօրեն Չաքարիա վրդ. Բաղումյանը։

Իր քարոզում հայր Չաքարիան անդրադարձավ քրիստոնյայի կյանքում աղոթքի կարեւորությանը եւ նշանակությանը։

«Աղոթքը քրիստոնյայի կյանքում ամենասրբազան պահն է, երբ ի խորոց սրտի գրուցում ենք Աստծու հետ՝ հայցելով Նրա անբավ ողորմությունն ու օգնականությունը մեզ համար։ Այսօր առավել, քան երբեք, կարիքն ունենք միասնական աղոթքի՝ հատկապես մեր հայրենիքի անսասանության եւ հայոց բանակի բոլոր մարտիկների խաղաղ եւ ապահով ծառա-

յության համար, քանզի կրկին անհանգիստ են հայոց աշխարհի սահմանները։ Ցավոք, ունենք նաեւ զոհեր՝ մեր խիզախ եւ նվիրյալ մարտիկների շարքերում, ովքեր ընկան մարտի դաշտում՝ հանուն հայրենիքի եւ մեր վաղվա օրվա։

Ուստի խնդրանքս է, որ ձեր աղոթքներում անպայման հիշեք եւ աղոթեք նրանց հոգիների հանգստության համար՝ Տիրոջից հայցելով բազկի գորություն, ուժ եւ կորով՝ հայոց բանակի ամեն զինվորի եւ հրամանատարի համար»,- նշեց Չաքարիա վարդապետը։

Հավարտ Պատարագի սրբազան արարողության, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգիստ՝ վերջին շրջանում զոհված հայորդիների հոգիների խաղաղության համար։

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Գառնիկ արք. Մխիթարյանը, ազատվելով Վանորենից տեսչությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Գուգարաց թեմում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Ղեւոնդ արք. Սարգսեյանը, ազատվելով Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակում ստանձնած պարտականություններից, նշանակվել է Գեղորդյան հոգեւոր ճեմարանի ազգայնական:

Նաակվել է Գեղորդյան հոգեւոր ճեմարանի ազգայնական:

Աննակ քին. Գրիգորյանը, ազատվելով Արգենտինայի հայոց թեմում ստանձնած պարտականություններից, իր հոգեւոր սպասավորությունը կշարունակի Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վահագն արք. Ղազարյանը, ազատվելով Գուգարաց թեմում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Սեւ Բրիտանիայի եւ Զյուսիսային Իռլանդիայի հայոց թեմում՝ ընդ իշխանության թեմակալ ամառնորդի:

Կարգադրւմ է հռչակվել Լեւոն արք. Գուլյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգադրվել է հռչակվել Լեւոն արք. Գուլյանը (Ուկրաինայի հայոց թեմ): Տնօրինության համար հիմք է ծառայել հայր Լեւոնի ներկայացրած դիմումը:

Այսուհետ կարգադրվել է եկեղեցականը դասվում է աշխարհականների շարքը՝ Դավիթ Գուլյան ազգանի անունով:

Տ. Արքար Բահանան վերահաստատվեց եկեղեցական կարգի մեջ



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Ուկրաինայի հայոց թեմի նախկին հոգեւոր սպասավոր Լեւոն Գրիգորյանը վերահաստատվել է եկեղեցական կարգի մեջ՝ որպէս ամուսնացյալ քահանա՝ տեր Արքար անունով:

Տնօրինության համար հիմք են ծառայել Գրիգորյանի քահանայական աստիճանի մեջ վերականգնվելու դիմում-խնդրանքը, Ուկրաինայի հայոց թեմի ամառնորդ Մարկոս եպս Զովհաննիս-

յանի միջնորդագիրը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարգապահական հանձնախմբի դրական եզրակացությունը:

Դեկտեմբերի 21-ին՝ երեկոյան ժամերգության ընթացքում, Մայր տաճարի Իջման սր Սեղանի առջեւ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ներկայությամբ, Արքար քին. Գրիգորյանը ստորագրել է իր ծառայական ուխտը:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՆԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՅԱՍԱՆԻ

Տեղի ունեցավ «Երաշ» եւ բողոք» համադիտական ֆոտոմրցույթի մրցանակաբաշխությունը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսի օրինությամբ ու ԶԳ կրթության եւ գիտության նախարարության աջակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը ԶԳ հանրակրթական դպրոցների 5-12-րդ դասարանների աշակերտների շրջանում ընթացիկ տարում անցկացրեց Յայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին նվիրված «Երաշ» եւ բողոք» համադիտական ֆոտոմրցույթը:

Մրցույթը մեկնարկել էր ընթացիկ տարվա ապրիլ ամսից: Մրցույթին ԶԳ տարբեր մարզերից եւ քաղաքամայր Երեւանից մասնակցեց շուրջ 4000 աշակերտ՝ իրենց աշխատանքները տեղադրելով մրցույթի համար ստեղծված կայքում: Մրցույթի աշխատանքներն ամփոփեց եւ մրցանակների արժանի աշխատանքներն ընտրեց հատուկ հանձնախումբը:

Դեկտեմբերի 19-ին Երեւանի Ս. Աննա եւ Ս. Կաթողիկե եկեղեցիների հարեանությամբ կառուցված եւ Վեհափառ Յայրապետի բարձր տնօրինությամբ ԶԳ-ին տրամադրված Նոր մասնաշենքի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ «Երաշ» եւ բողոք» ֆոտոմրցույթի մրցանակաբաշխության միջոցառումը, որին ներկա էին ԶԳ-ի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը, ԶԳ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԱԺ պատգամավորներ, Երեւանի փոխադաշնակալ Արամ Սուքիասյանը, հոգեւոր հայրեր, հասարակական եւ բարեսիրական կազմակերպություն-



ների ու հիմնադրամների ղեկավարներ, ԶԳ-ի համագործակց կառույցների ներկայացուցիչներ եւ այլք:

Միջոցառման ընթացքում մրցույթում հաղթողներին հանձնվեցին մրցանակներ: «Լավագույն աշխատանք» անվանակարգում հաղթող ճանաչվեց Աննա Գրիգորյանը (Լուռու մարզի Ջորադյուղի հիմնական դպրոց, 9-րդ դաս.), «Լավագույն մտահղացում» անվանակարգում՝ Ջարուհի Ղազարյանը (Արագածոտնի մարզի Եղիպատիկի միջնակարգ դպրոց, 10-րդ դաս.), եւ «Զատուկ մրցանակ» անվանակարգում՝ Խորեն Ամիրխանյանը (Արագածոտնի մարզի Արագածականի թիվ 1 միջն. դպրոց, 10-րդ դաս.):

Եվս տասնչորս աշխատանքի հեղինակ պարգևատրվեց՝ լավագույն մասնակցության համար:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
քրիստոնեական դաստիարակության կենտրոն



Սկիզբը՝ թիվ 22-23


Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին՝ 1914 թ., Խնուսի գավառը վարչականորեն մտնում էր Երզրումի (Կարին) նահանգի մեջ: Գավառի հայկական 33 գյուղերում (այլ տվյալներով՝ 35-38) ընդհանուր առմամբ ապրում էր 26 հազար հայ: Առավել խոշոր գյուղերն էին Գարաջոբանը (3 հազար մարդ), Գարաջուփին (1,5 հազար մարդ), Խոզին (1,9 հազար մարդ), Գովանդուկը (1,5 հազար մարդ), Զարամիկը (1,5 հազար մարդ), Չաուրման (Չեփրան, 1,8 հազար մարդ), Գուպլը (1,4 հազար մարդ), Արոսը (1,2 հազար մարդ), Խալաուշը (Խալաույս, 1,1 հազար մարդ), Զաղբիկը (1,1 հազար մարդ): Զայաթնակ էր նաեւ գավառակենտրոնը՝ Խնուս քերդաքաղաքը (3,1 հազար մարդ):

Առաջին աշխարհամարտի սկսվելուց անմիջապես հետո ողջ արեւմտահայության պես Խնուսի գավառի հայության դրությունը եւս սկսեց օրեցօր վատանալ: Չորակոչը, թալանն ու տարբեր տեսակի բռնությունները հայ ժողովրդի համար ստեղծել էին անտանելի եւ անհանդուրժելի դրություն:

Համիդյան քրդական հեծելազորը կենտրոնացավ Խնուս Բերդ, Գարաջոբան, Գովանդուկ, Զարամիկ եւ Չաուրման հայկական ավաններում, որոնց կառավարությունը պարտավորեցրեց մոտակա հայ

գյուղերի մասնակցությամբ պարենավորել զորամիջին: Բարեբախտաբար կարճ ժամանակ անց սրանք փոխադրվեցին Կարին-Բասեն-Ալաշկերտ ռազմաճակատ: Բացի զորագնդին տված հարկերից՝ հայ բնակչությունը պարտավոր էր տալ նաեւ պատերազմի հարկադրանքի պետական «Թեքե-լիֆի Զարափե» կոչվող պարտադիր փոխառությունը, որով հայ բնակչությունն իրենից պահանջված ամեն ինչ պետք է տար պետությանը, այդ թվում՝ եգ, կով ու ոչխար, ինչպես նաեւ՝ ցորեն, գարի, խոտ, անգամ՝ ձեռք ու ճրագ: Այս ամենի դիմաց հարկահավաք պաշտոնյան տրամադրում էր հասարակ թուղթ, որն իրենից որեւէ արժեք չէր ներկայացնում:

1914 թ. դեկտեմբերին կազմվում են բեռնակիր գնդեր, որոնց մեջ բռնությամբ ներառում են նաեւ հայ կանանց, ովքեր շալակով բռն էին կրում մինչեւ Կարին, Բասեն եւ Ալաշկերտ: Նրանցից շատերը զոհ գնացին ճամառ քնի ու ցորենի, ոմանք էլ սովին ու համաճարակին: Ինչպես վկայում է Զարամիկ գյուղից թուրքական բանակում գորակոչ եւթարկված զինվոր, տասնապետ Եղիշե Մելիքյանը, դեկտեմբեր-հունվար ամիսներին հայ զին-



վորներին թուղթ հրամանատարները զինաթափ էին անում եւ ուղարկում «Դեւ Բոյի» խրամատների ճանապարհները Լորդգեյու, որտեղից էլ նրան հաջողվում է փախչել եւ թաքնվել հայրենի Խնուսում: Նույն Մելիքյանը նկարագրում է Խնուսի հայերի վիճակի օրըստօրե ծանրացումը հատկապես այն բանից հետո, երբ 1914 թ. աշնանը Չուխուրա Մուսա բեյի 20 հազարանոց իրոսակներով Բուլանուխի վրայով գալիս է Խնուս՝ Բասենի ճակատ գնալու համար: Նա իր ճանապարհի վրայի Խնուսի հայկական գյուղերը սարսափի ու թալանի է ենթարկում եւ 700 հեծյալներով մեկ շաքաթ Զարամիկ գյուղում մնալով՝ նոր տանջանքներ ու տառապանքներ պատճառում գյուղացիներին եւ գյուղի ռեա Տերտերոջ Արշակի (որը գյուղից բացակայում էր) եղբորը՝ Գարեգինին, սարսափելի վախկոճման ենթարկել տալիս: Այդ օրերին տառապանքի ենթարկված Խնուսի հայ բնակչության ճանր վիճակի մասին ահա թե ինչ է գրում Խնուսի հոգեւոր ամառնորդ Արքար վարդապետ Յոթնեղբայրյանը՝ Կ. Պոլսի Յայոց ազգային Պատրիարքարան ուղարկած իր 1914 թ. հոկտեմբերի 10-ով թվագրված զեկույցում. «Կրակի

գծին մերձավոր հայ ազգաբնակչությունը պետք ունի գերմարդկային համբերության այս անտանելի տառապանքին: Այսօր որոշված է 50 քուրտ հեծելազորը դրվել վիճակիս Գուպլ գյուղը խուզարկելու համար... Կրգզամ, թե առանց իրական փաստի ինչ ահ ու սարսափի պիտի մատնվին խեղճ գյուղացիները:

... Վերջապես կապիք տագնապայի օրեր եւ շփարած ենք, թե ինչպես եւ ինչով միջաբարենք անստուգության մեջ տվյալսող հայ ժողովուրդը:

Խնուսի հայ բնակչության վիճակն առավել ծանրացավ այն բանից հետո, երբ 1917 թ. փետրվարին Մուսա բեյի համիդեականների փոխարինեց Բաղդադի արաբական զորաբանակը, որը եկել էր Խնուսի վրայով Դուրադի ռազմաճակատ մեկնելու: Սկզբում նրանք լավ վերաբերմունք ունեին հայերի հանդեպ, սակայն պարտությունից հետո, երբ նահանջեցին, ճամառ ցորենին լցվելով Խնուսի հայկական գյուղերը, սկսեցին սոսկալի թալաններ կիրառել հայերի հանդեպ: Նույն կերպ Ալաշկերտի եւ Մանազկերտի քրդերը, ռուսական բանակի ամառնորդացումից փախչելով, Խնուս էին լցվում եւ կատարյալ

պատուհա դառնում հայկական գյուղերի համար: «Զայն իր սեփական տունեն դուրս կհանվեր եւ թուրք ու քուրդ գաղթականները կտեղավորվեին: Եկող գաղթականները կապրեին հայու հացով ու ջրով», - գրում է Ե. Մելիքյանը:

Թուրքական իշխանությունները, ծրագրելով խնուսահայության ողնացումը, գլխավոր դերում նախատեսել էին քրդերին՝ Համիդեի գնդերին եւ քրդական իրոսականներին: Զայտին է, որ Խնուսի գավառը եւ նրա հարակից շրջանները քրդական խոշոր գեղերի բնակավայրերից էին: Ջարդերի ընթացքում քրդերին անմիջականորեն աջակցելու էին թուրքական ոստիկանությունն ու ծանդարմեւրիան: Եղիշե Մելիքյանն իր «Խնուսի տեղահանությունը եւ դիմադրությունները» հոդվածում թվարկում է խնուսահայության ջարդերի ղեկավար ու մասնակից քուրդ աշիրթներին: Խնուսահայության ջարդի ղեկավարներից նա առանձնացնում է Գայմազամ Թափր բեյին, Բիթլիայի Ալի աղային, Հաճի Իսաֆ Էֆենդուն, Նուրադին բեյին, Մուհադին բեյին, Մահմուտ աղայի տղային՝ Շաքրին, Ֆրգա Գումանտան Հաճի Համուի բեյին, Զեթաթյա Միրզային, Խնուսի Խատին, Խոլիասարի շեյխ Սայիդ Էֆենդուն, Խոջա շեյխ Մուրադի տղային՝ Նուրին:

Շարունակությունը՝ էջ 4

ՀՈՎՀԱՆՆԵՆ ԵՐԱԶ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 19-23

«Երվանակալը», որ ակնարկված է վերոբերյալ նամակում, մի կարեւոր եւ եական գաղտնիք է բացում հովի. Շիրազի «Աստծո գլուխգործոցը» պոեմի ստեղծագործական պատմության մեջ:

Նախ՝ «մեղքը քաղելու» համար է բանաստեղծը գրել դեռեւս անտիպ այս ստեղծագործությունը, նոր միայն հետո՝ աստվածաշնչյան թեմայով նույն վերնագրով ծավալուն պոեմը՝ «Բիբլիականի գարմից»: Իր «սիրո աստվածուհու» անթերի գեղեցկությունն ընդգծելու համար հենց նրան է բանաստեղծն անվանել «Աստծո գլուխգործոց»: Բանաստեղծն այդ երկը պարզապես չի կամեցել գրել «վատ թոթի վրա», եւ զարմանալիս այն է, որ հենց իրենից խոսված Իդայից է խնդրել «լավ թոթով» քառալուսիններով տետր, որի վրա սովորաբար գրում էր ինքը:

«Այս «Գլուխգործոցը» Աստծո այս տետրի վրա չգրեցի, կարդում եմ նամակում, նրա համար, որովհետեւ թուղթը լավը չէր, թեթ լավ թուղթ գտնես՝ քառալուսիններով՝ խնդրում եմ ինձ նվիրես...» (ընդգծ. բնագրի - Ս. Մ.):

Տետրի շապիկի վրա ստեղծագործության ընդհանուր խորագիրն է՝

ԵՐԱՆԱԿԱՆ

ԱՌ ԻՄ ՍԻՐՈ ԱՍՏՎԱԾՈՒԹՅ ԻՂԱՆ...

Տետրի առաջին էջում վերնագիրը եւ բնագրան են, ինչպես «Բիբլիական» պոեմում:

ԱՍՏՈՂ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ

(պոեմ)

Ըսավ՝ ճակտիդ քրտինքով ապրիս...

Մորս խոսքերից

Տետրի հաջորդ էջերում երկմաս անավարտ պոեմն է, որ առաջին անգամ ներկայացնում ենք ընթերցողին: Ստեղծագործության առաջին մասը չունի հռոմեական I նշումը, որ մենք հավելում ենք, իսկ երկրորդ մասն առանձնացված է II նշումով:

I
Կանգնած եմ ահա Մասիսի դեմ՝
Օ՛, վաղո՛ւց, վաղո՛ւց ժայթքել է նա,
Սիրտս հորդում է, պիտի ժայթքեմ,
Ժայթքելու հերթը իմն է հիմա:
Բայց հառաչանքս պիտի ժայթքի
Մարգարտալացով իմ մեծ հոգու,
Եվ հուր թեւերով Սիմուրդ հավքի
Իմ լավայի մեջ ճախրում ես Ղու՛,
Իմ երգումի մեջ, իմ վշտի մեջ...
Չհավատացիր դու իմ վշտին,
Իմ սիրո մասին չար խոսեցիր,
Մինչ լեռ էր իջել իմ հեզ սրտին՝
Ժայռի վրա էլ դու վերջ բացիր,
Եվ դո՛ւ, որ, ավա՛ղ, խաբված էիր
Մինչեւ հայտնվելն իմ երազուն:
Ա՛խ, ինչպե՛ս, ինչպե՛ս հավատայիր
Ղու՛ մարդուց խաբված՝ նորից մարդուն:
Ու դրա վշտից ներում եմ քեզ
Եվ աղերսում եմ ինձ էլ ներիր,
Փայփայիր սիրտս կարոտակեզ՝
Իմ սրտի ահեղ վիշտը վանիր,
Թող չքվի ամպս՝ դեռ կայծակող,
Եվ աստվածային աջքերիդ մեջ
Թող սերս դառնա ոսկեղեն ցող,
Բարձրանամ սիրող զագաթը պերճ:
Մահից սոսկում եմ ես աշխարհում՝
Նրանից, որ քո կյանքն եմ սիրում,
Ներիր, համբույրիս հուշերն հիշիր,
Ինձ աջքերիցդ մի՛ մշուշիր,
Թող մնա իմ մեջ կարոտի պես,
Ու թող դարերով կարոտեմ քեզ,
Եվ ինչքան երգով սիրտս կարդաս՝
Այնքան անմահ է իմ սերն երազ...

II

Ա՛խ, անգի՛ն Իդա,
Ինձ հավատա,
Իմ հոգին ծուկը է իջնում սիրով
Քո սրբության դեմ, արցունքներով,
Եվ ահա իբրեւ հուր վարդերով՝
Կուգեմ քեզ գրկել երդումներով,
Սիրտդ կտրեցի ես մի անգամ
Կոտրվի՛ սիրտս թող հավիտյան,
Բայց կուգեմայի սիրտդ մոտեյ,
Արեւիդ վրա մի բիծ գտնել,
Որ դուրս վանեի քեզ իմ սրտից՝
Որպես տատակ՝ զմրուխտ արտից,
Որ հագուրդ հասներ իմ կակածին՝



Գրո՛ւ Այ. Գրիգորյանի

Թե Իդաս չար է ու չարածին,
Թե գո՛ւր եմ, գո՛ւր եմ այսպես սիրում,
Նա դրախտ չունի իր աշերում,
Ու չկա՛ մի սիրտ իր կրծքի տակ,
Պատրա՛նք է սերս, ոսկի՛ պատրանք,
Սիրել, խաբվել է, հանգել է նա...
(Հովի. Շիրազի առաջին անգամ հրատարակվող այս ստեղծագործության եւ նամակների ինքնագրերը պահվում են Մարիկա Տոկյանի մոտ):

Այստեղ Հովի. Շիրազի ձեռագիրն ընդհատվում է, բայց սիրո դրաման շարունակվում է այն բանաստեղծություններում ու նամակներում, որ գրվել են 1947 թ. հետո: Ուրեմն պետք է նորովի եւ ուշադիր վերնաթերթի Շիրազի սիրերգությունը հենց այս տեսանկյունով, եւ կբացահայտվի շատ բանաստեղծությունների ու պոեմների ստեղծագործական պատմությունը, որ առաջներում ենթադրաբար ունենում էր ուրիշ վերագրումներ:

Իդա Մովսեսյանի հետ հարաբերությունների վերջնական խզում չի եղել անգամ նրա ամուսնալույց եւ երեսն ունենալուց հետո: Այդ են վկայում տասնամյակներ

րի ընթացքում բուռն զգացմունքներով գրված, տարբեր ժողովածուներում ցրված տասնյակ բանաստեղծությունները՝ քնարական գլուխգործոցներ, որոնք պարունակում են մարդկային գեղեցկության աստվածացման, խոր զգացմունքների խոստովանության, նվիրվածության ու զոհաբերվելու պատրաստակամության մի ողջ համանվագ, ինչն առհասարակ բնորոշ է համաշխարհային սիրերգության մարդասիրական ոգուն եւ եռությանը, բոլոր ժողովուրդների գրականությունների մեջ հանդես եկած մեծ սիրերգակներին:

Իդային նվիրված բանաստեղծությունները կա՛մ ունեն հենց «Իդային» վերնագիրը, կա՛մ անվերնագիր են՝ «Իդային», «Իդին», «Ի-ին» ընծայականներով: Այդպիսիք են «Արդեն իմն ես, իմն ես դու, ու սիրտս հաշտ է զարկում», «Աչքերդ կապույտ, երկինքն էլ կապույտ», «Ասա՛ ինձ, Իդա», «Ձեզ տեսա, ավա՛ղ, քո մանկիկի հետ», «Իդայի մորը», «Սիրող պատանու ցնորքի նման», «Անցել է, Իդա՛, երեսուն տարի», «Մի՛թե աստված է պատժել պոետին», «Իդա՛, ինչո՛ւ է անուրդ Իդա», «Ինչքան էլ հանկարծ, հանդիպեց անվույթ», «Կսիրեիր ինձ, Իդա՛», «Վանուսի Իդային», «Նորած հներգություն» եւ այլն, որոնք բոլորը կան 1984 թ. հրատարակված դիտարկվող ժողովածուում:

Բայց սրանց հետ միասին առկա են նաեւ Իդա անունը չպարունակող եւ ընծայական չունեցող բազմաթիվ բանաստեղծություններ, որոնց ներշնչան ակունքը դարձյալ նույն «սիրո աստվածուհին»՝ Իդա Մովսեսյանն է:

Մեկ անձնավորության նվիրված այս քան բանաստեղծությունները, բազմերանգ զգացմունքների անկեղծությունից ու գեղարվեստական որակից բացի, քանակական առումով էլ սիրո ուժգնության ու տեսականության անհերքելի ապացույցներ են: Նրանք բոլորն էլ, սակայն, մարդկային բուրբոնյա զգացմունքները եւ սիրո վեհությունը փառաբանող հիմներգեր են՝ որոշակի իրադրության հանճարեղ պատկերման եւ սիրո հոգեբանության, հոգու ներքին ցավի անմասնորդ բացահայտման առումով:

Շարունակությունը՝ էջ 5

Ժամանակակից հնդկահայոց համայնքի լեզվական առանձնահատկությունները




տեաբար հնդկահայերի, այսպես ասած, մայր լեզուն կարելի է համարել պարսկահայերի խոսվածքը, որը, սակայն, անցավ յուրահատուկ ճանապարհ՝ իր վրա կրելով հնդկերեն, բենգալերեն եւ անգլերեն լեզուների անմիջական ազդեցությունը: Գրավոր խոսքում այդ ազդեցությունը չի զգացվում, քանի որ հնդկահայության գիտական, գրական եւ մշակութային գործունեությունն այժմ իրականացնում է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը, որը գործում է Մայր Աթոռի հովանու ներքո, այսինքն՝ կիրառվում է ժամանակակից արեւելահայերենը: Այնտեղ լույս տեսնող

հայկական բոլոր գրքերը, գրքույկները, տոնական ծանուցումները, թռուցիկներն ու հրավիրատուները լույս են տեսնում ժամանակակից արեւելահայերենով: Դրա անհերքելի պատճառներից մեկն էլ այն է, որ ճեմարանի հայոց լեզվի ուսուցիչներն այժմ միայն ՀՀ քաղաքացիներ են, այլ կերպ ասած՝ ժամանակակից հայերենի ուսուցման մասնագետներ: Թեեւ երբեմն նրանք ստիպված են լինում տարբեր երկրներից ժամանած երեխաների հետ աշխատել իրենց մայրենի բարբառով՝ զուտ այն կենդանի պահելու նպատակով, սակայն դա շատ մասնավոր բնույթ է կրում:

հայերենը: Պարսկահայ բարբառը պատկանում է հայ բարբառների ում ճյուղին (տե՛ս Ա. Նաիրյան, Հայ բարբառագիտություն, Երեւան, 1953, էջ 229): Հնչյունական բաղաձայնական համակարգը եռաշարք է, սակայն անգլերենի անմիջական ազդեցությամբ ձայնավոր հնչյունները ռեզային են արտասանվում, ինչն էլ հենց հնդկահայերենի՝ պարսկահայերենից փոքր-ինչ տարբերվելու առաջին պատճառներից մեկն է: Սակայն, երաժշտականությամբ, հնդերանգով եւ շեշտադրությամբ առանձնահատկությամբ, հնդկահայերենը լիովին համապատասխանում է պարսկահայերենին:

Հնդկահայերենի հնչյունական համակարգի առանձնահատկություններից են նաեւ հնչյունափոխության՝ ժամանակակից հայերենում ոչ ընդունելի կաղապարները: Այսպես՝ գոյականի հոլովման, բառի աճման եւ բառաբարդման ժամանակ ժամանակակից հայերենում գործում է ձայնավորների հատուկ օրինաչափություն (տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երեւան, 1982, էջ 72), ինչը չի գործում հնդկահայ տարբերակում. հմմտ.՝ ջրի-ջուրի, մկան-մուկի, կատվի-կատուի, ջրոտ-ջուրոտ եւ այլն:

Շարունակությունը՝ էջ 8





Պարոյր Սեւակ

Սկիզբը՝ թիվ 18-21, 23

Հանգստի իր անփոխարինելի տեղն ու դերն ունի ժողովրդախոսակցական լեզվում: Դեռես Նաբեկյանի եր ամանձնացնում հանգի ժողովրդական ծագումը՝ կապված լայնաց երգերի ներգործությունն ավելի հուզական դարձնելու հետ: Հանգը լայնորեն տարածված է ժողովրդական ասույթներում ու իմաստախոսություններում, որոնք ամանց հանգի պարզապես չեն ստեղծվի: Անպակասի՝ «Ուշ լինի՝ նուշ լինի», «Աշխարհը՝ դմակ, մարդը՝ դանակ», «Լավ է՝ ասեն գեշ, քան թե ասեն էշ», «Ով ալարի, ոչ դալարի», «Սար ու ձոր՝ տերտերի փոր», «Այր ու կին՝ մեկ մարմին», «Դրսից քահանա՝ ներսից սատանա», «Աշխարհը՝ արոտ, մենք մեքը՝ կարոտ», «Ով դատի, նա կուտի», «Մի ունեցիր 100 դահեկան, այլ ունեցիր 100 բարեկամ», «Գողությունը չունի թողություն», «Որտեղ հաց՝ էստեղ կաց», «Ախպերն ախպոր ախպուրն է, որ ծարավի՝ պաղ ջուրն է», «Աղել կին չունի գին», «Խոսքը՝ մեծին, ջուրը՝ պուճուրին»,

Սկիզբը՝ էջ 2

Իսկ շարդին մասնակցելու մեղսակից քուրդ ցեղապետից ամանձնացնում է Զիբրանցի աշիրթից՝ Ֆեյզի բեյի տղաներին ու թոռներին, Սելիմ բեյին, Ազմային, Սատի տղային ու նրա գավակներին, բռլըքիներից՝ ավագակապետ Շահո-Խալոյի տղաներին՝ Թաժույին, Համդույին, Օգմանի Ալիին ու Նատույին: Չըմբքի աշիրթներից՝ Խուլիխան բեյին ու իր տղաներին՝ Ուսույին ու Սոռույին: Հասանակցներից՝ Գուպալի Ուսուֆ աղայի տղային՝ Ֆեյզիին, եւ ուրիշների:

Փաստորեն՝ հիմնականում խնուսահայության կոտորածի ղեկավարներն ու մասնակիցները եղել են քուրդ ցեղապետերը՝ իրենց ընտանիքներով: Ինչպես ամենուրեք, հայերի հնարավոր դիմադրությունը կանխելու նպատակով ջարդերից ամառ, երիտթուրք իշխանությունների հրամանով, 1915 թ. մարտի սկզբներին տեղի հայության ամառնորդներն ու նրանց մեջ հեղինակություն վայելող առավել նշանավոր մարդիկ ձերբակալվեցին, որով գլխատվեց խնուսահայությունը: Խնուս բերդաքաղաքում եւ տարբեր գյուղերում ձերբակալվեց նշանավոր 150 հայ, որոնց թվում՝ ամառնորդարանի քարտուղար Կարապետ Մալխասյանը, Արոս գյուղի վարժապետ, Էջմիածնի Գետրոյան հոգեւոր ճեմարանի շրջանավարտ Հրաչյա Դեւոնյանը՝ քրդերին այրուքենի եւ քերականության հեղինակը, Խալո-Մելքոնի տղա Վահանը, Հովհաննես Շահմուրադյանը, Իվան Սիմոնյանը, Մկր-Հովդի Սուքիասն ու Արշակը, Զորմյան Արամը, Փալանջյան Գետրոյը, Կազիմյան Ավետիս աղան եւ նրա մեծ տղան՝ Արսենը, Անթոյան Մուշեղ աղան, Ալեքսան Էֆենդին եւ իր տղան՝ Կյազը, Խարամիկից Մուրադյան Հակոբի տղան՝ Տիգրանը, Մեթի Խուրշուդը, Բեր-

ՀԱՄԱԳԻՐ

«Խմիչքի մեկը լավ է, երկուսը՝ բավ է, երրորդը՝ ցավ է», «Ցավը կուգա վազեվագ, դուրս կգնա նազեվագ», «Տնտե՛ն, հավասար տես», «Արի՛, Նո՛ր տարի, գալուստդ բարի»: Օրինակները շատ են: Նաեւ գրողներն են դիմում այսպիսի իմաստախոսությունների, դրանք տարածված են հեքիաթներում, ազգագրական-բանահյուսական հազեցվածություն ունեցող վեպերում, պոեմներում, ընդհանրապես՝ արձակ եւ չափածո երկերում (Աբովյան, Պռոշյան, Աղայան, Թումանյան, Շիրազ, Սահյան, Սեւակ...):

Ինչպես նշեցինք, հանգը հիմնականում իշխող է երգեցիկ-մեղեդային կանոնավոր կառուցվածքի բանաստեղծություններում: Այսպիսի կառուցվածքի դեպքում հանգը չափի հետ մեկտեղ դառնում է խոսքը կազմակերպող կշռույթային հիմնական գործոն: Լեւ Օգերովի գրքերից մեկում Միխայիլ Ավետիկով բանավոր խոսքերից այս դեպքի համար արված է մի շատ դիպուկ մեջբերում. «Ես պնդում եմ, որ հանգը բանաստեղծի ամառնի օգնականն է <...>: Այն ամառացնում է զուգորդություններ: <...>: Հանգը, կրկնում եմ, ձեր ամառնի օգնականն է ոչ թե այն բանի համար, որ դուք համատեղում եք անհամատեղելին, այլ այն, որ ամանց դրա անհնար է արտահայտել՝ ինչ ուզում ես ասել բանաստեղծությամբ» (Лев Озеров, В мастерской стиха, М., 1968, էջ 39-40): Այստեղ բանաձեւի պես ամբողջացվում է այն մոտեցումը, ըստ որի՝ պոեզիան անհնար է պատկերացնել ամանց հանգի, եւ հանգը գնահատվում է որպես ընդհանրապես բանաստեղծական արտահայտությանը համարժեք երեւույթ: Կանոնավոր համաչափ կառուցվածքի բանաստեղծության մեջ դա, իրոք, այդպես է: Բանաստեղծական այս տեսակի որդեգիր Համո Սահյանն ունի այսպիսի ինքնաբերական. «Երբ լուռ են հանգերը, // Եվ լուռ են տողերը // Սրտիս մեջ: // <...> Երբ զարթնում հանգերը, // Հյուսվում են տողերը // Սրտիս մեջ» (Հ. Սահյան, Նաիրյան դալար բարդի, 1958, էջ 234): Դարձյալ խոսքը հանգի միջոցով ամառացող պատկերային զուգորդությունների մասին է: Այս դեպքում տեղին է կիրառել Վ. Բուրիչի միտքը, թե «...հանգը

հանդես է գալիս որպես զուգորդական մտածողություն (այսպես կոչված՝ հանգային մտածողություն), որպես խթանիչ ու կարգավորիչ» (В. Бурч, От чего свободен свободный стих, «Вопросы литературы», 1972, թիվ 2, էջ 136):

Այս կարգի հաջողված բանաստեղծություններում հանգը հրաշալիորեն նպաստում է արտահայտության ձեւավորմանն ու ամբողջացմանը: Հանգն ավելի երգեցիկ ու հուզական է դարձնում խոսքը, խոսքի պարբերական շարժումը դարձնում կապակցված, ներդաշնակ, հաջորդական, կրկնվող: Հանգաբան այս դեպքում դառնում է պատկերի ամբողջացման անփոխարինելի բառերից մեկը: Այն նպաստում է ոչ միայն ասելիքի իմաստային-տրամաբանական, այլեւ հուզական, հնչեղանգային ամփոփվածությանը:

Այս կարգի բանաստեղծություններում տարբերակվում է հանգի երկու պահ՝ ամառնային եւ ենթակայական: Ամառնայինն ամառնի հանգավորվող բառն է, ենթակայականը՝ երկրորդ: Այս կարգի դիտարկումներ ունի Նաեւ Յուրի Տիկալովը (տե՛ս Ю. Тынянов, Проблема стихотворного языка, М., 1965, էջ 60): Եթե ամառնի հանգաբանն ազատ ներշնչանքի արգասիք է, ապա երկրորդը բանաստեղծն արդեն «սարքում» է, որոնում, գտնում իմաստով եւ հնչեղությամբ հարմար բառ: Իսկ բառն այս դեպքում ինքնուրույն միավոր չէ, այն կապի մեջ է պատկերը կազմող այլ բառերի հետ եւ իրենով պայմանավորում է պատկերի որոշակի իմաստային ուղղվածությունը: Այս դեպքում հաճախ ոչ թե իմաստն է իր զարգացմամբ ստեղծում տվյալ հանգը, այլ՝ ամառնի հանգի հնչեղությունը, ինչը բանաստեղծին պարտադրում է, ստիպում է ընտրել հատկապես այն բառը եւ ոչ թե մյուսը: Չուտ հնչյունական կողմը կարող է հեղինակին որդեկ ներմուծելու, օգտագործելու ոչ այն բառը, որը հատկապես անհրաժեշտ է, այլ՝ մեկ ուրիշ բառ եւ դրա վրա ձեւելու խոսքի շարունակությունը: Հնարավոր է, որ ենթակայական հանգը, ըստ նախադասության իմաստի, վերափոխի ամառնի հանգաբանը: Հանգերով գրված հաջողված գործերում օրինակները չափից դուրս շատ են.

թե՛ հայ, թե՛ համաշխարհային գրականության մեջ հեղինակները հմտությամբ լուծում են այդ հակադրությունը: Նրանք այնպես են կազմակերպում խոսքը, ընտրում հանգաբաները, որ ստեղծվում է մեկ օրգանական եռանկյուն միություն, ուր հանգի «սարքովորված» մասին խոսք լինելու և կարող: Հայ բանաստեղծների փորձով ներկայացնենք հանգի յուրահատկությունները:

Գեղամ Սարյանը զգացմունքային բանաստեղծ է: Նա չի ձգտում չափական բազմազանության, հանգային ճոխության ու հարստության: Նրա մեղմ քնարական խառնվածքը, պատումի հանդարտ, միալար ընույթը հարմար ձեւակերպում են ստանում միանման չափերի ու արտաքուստ իրենց բառակազմով ու հնչեղությամբ աչքի չընկնող հանգերի մեջ: Նա ձգտում է խոսքը հասցնել անթերի նվագանության: Ձայնական ներդաշնակության հակումը նրա համար ոչ թե ամառնի մի բան է, այլ պայմանավորված է ամբողջ կշռույթային համակցությանը շատ բնորոշ մյուս տարրերով: Իսկ մնացած տարրերն այս դեպքում կայուն չափական շարքերն են ու խոսքի շարահյուսական-հնչեղանգային ձեւերների միատեսակ կարգը: Սարյանի հանգաբանն ստեղծվում է ամանց արիեստականությամբ: Տողի տրամաբանությունը գրեթե երբեք չի մթաղվում արտասովոր հանգերի գայթակղությամբ:

Սարյանը գտնում է տրամադրության, հոգեվիճակի մեղեդին եւ իրական որեւէ պահի զգայական վերապրումը կազմակերպում բառերի հնչյունական, ընդհանրապես կշռույթային կարգավորման այնպիսի կառուցվածքով, որ այդ ամբողջությունը դարձնում է սուկ բառային կազմ լինելուց եւ դառնում խոսքի ու մեղեդու խառնուրդ: Հանգիստ ու հանդարտ է զարգանում նրա խոսքը՝ ամանց ջղաձգումների, ամանց նյարդային լարվածության: Այսպես.

Մայրամուտի ժամանակ արեւը թույլ է լինում,
Հողմերը ծուլ են լինում մայրամուտի ժամանակ,
Ամպերը հուր են լինում, հանդերը լուռ են լինում,
Կանչերը զուր են լինում մայրամուտի ժամանակ:

Շարունակությունը՝ էջ 6



դեցիներ Միքայելյան Մեսրոպը, Մուկոյան Միսակը, Ծուրթ Սարգիսը եւ ուրիշներ: Նրանց մեծ մասը դաշնակցականներ էին: 4 օր Խնուսում բանտարկվելուց հետո նրանք չեթների եւ ժանդարմների հսկողությամբ շղթայակապ տարվում են իբրեւ Կարին՝ դատվելու: Իրականում խնուսահայության ղեկավարությունը տարվել էր Դերձան-Երզնկա ճանապարհի վրա գտնվող Սանսար-Դարա կիրճը (Շողալարի ձոր) եւ գնդակահարվել:

Հայտնի է, որ պատերազմի մեջ մտնելուց հետո՝ 1914 թ. դեկտեմբեր եւ 1915 թ. հունվար ամիսներին, կարճ ժամանակ անց, Թուրքիան կրեց իր ամառնի խոշոր պարտությունը Սարիղամիշի ճակատամարտում: Վախենալով, որ ռազմաճակատի գծին մոտ գտնվող Խնուսի գավառը կարող է գրավվել հարձակվող ռուսական զորքերի կողմից եւ իրենց չի հաջողվի ոչնչացնել տեղի հայությանը, թուրքական իշխանություններն այստեղ զգալիորեն ավելի շուտ սկսեցին ցեղասպանության ծրագրի իրա-

կանացումը: Նույնպիսի շտապողականություն էր օպերատիվությամբ նրանց գործում էին Նաեւ Երեւանի հայությանը մյուս շրջաններում: Թուրք եւ քուրդ ցեղասպանների կողմից Խնուսի գավառի հայության ոչնչացումը իրականացվեց 1915 թ. մայիսի սկզբին՝ մի քանի օրերի ընթացքում: Սակայն բոլոր վայրերում չէ, որ թուրք-քրդական ռճրագործներն իրենց սեւ գործը կարողացան կատարել հեշտությամբ ու անարգել: Մի շարք գյուղերում տեղի ունեցան ինքնապաշտպանական հերոսամարտեր, որոնց արդյունքում ջարդարարները կրեցին զգալի կորուստներ, իսկ բնակչության մի զգալի մասն էլ կարողացավ փրկվել: Հարկավոր է նշել, որ ընդհանուր առմամբ Խնուսի գավառը բավականին լավ էր նախապատրաստված ինքնապաշտպանությանը, քանի որ հայ ազգային, քաղաքական կուսակցությունները եւ մասնավորապես ՀՀԴ-ն տասնամյակներ շարունակ տեւական աշխատանք էր կատարել այստեղ: Չպետք է մոռանալ, որ գավառը գտն-

վում էր Արեւմտյան Հայաստանի 3 ամառվել հայաշատ՝ Վանի, Բաղեշի (Բիթլիս) եւ Կարինի (Երզրում) նահանգների սահմանագլխին եւ Ռուսահայաստանից դեպի երկիր գեղի, զինամթերքի եւ ֆիդայիների տեղափոխման կարեւորագույն հանգրվաններից մեկն էր: Սակայն այդ ամենով հանդերձ, ըստ Եղիշե Մելիքյանի, լայնածավալ եւ հաջող ինքնապաշտպանություն, այնուամենայնիվ, չստացվեց: Նա հետեւյալ կերպ է դա բացատրում. «Ընդհանուր հոգեբանությունն այն էր, թե ռուսը շուտով պիտի գրավեր Խնուսը: Այս հոգեբանության հետեւանքով հայերը որեւէ լուրջ պարտաստություն չտեսան ապստամբության կամ ինքնապաշտպանության համար: Մասնակի պատրաստություններ կային միայն մի քանի գլխավոր գյուղականների մեջ...»: Բացի այդ, ինչպես վկայում է Եղիշե Մելիքյանը, Խնուսից մի քանի քաղեցիկ քուրդ ցեղապետեր խնուսահայությանը հավաստիացրել էին, որ եթե իշխանությունները ձեռնարկեն հայերի կոտորած, ապա իրենք պարտավոր են պաշտպանել նրանց: Հայերը եւս պարտավորվեցին պաշտպանել քրդերին, երբ ռուսները գրավեց Խնուսը: Սակայն ռուսական հրամանատարությունը դադարեցրեց իր զորքերի ամառնադաշնակը, եւ իրադրությունը կտրուկ փոխվեց: Հայերին «պաշտպանող» քուրդ ցեղապետերը, անշուշտ, թուրք կառավարության հրահանգով, օգտվելով աշիրթից, փոխեցին իրենց որոշումը, մոռացան իրենց խոստումը եւ սկսեցին համագործակցել իշխանությունների հետ՝ նպատակ ունենալով մասնակցել տեղի հայ բնակչության կոտորածին եւ ունեցվածքի թալանին:

Շարունակելի
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Պողոտեոս (ուժեղացված դիմանկար)

Սկզբը՝ թիվ 22-23

Մեծ Հայքը Հին աշխարհի՝ պողոտեոսյան «Աշխարհագրության» համակարգում:

Ինչ տեղ ունի Մեծ Հայքը «Աշխարհագրություն» երկում, որոնք են Մեծ Հայքի սահմանները, ինչպիսիք է վարչատարածքային բաժանումը:

Որպես Մեծ Հայքի թագավորության՝ Պողոտեոսի պատկերած երկրի համակարգի բաղադրատարրի ընկության առաջին քայլ՝ պետք է նախեառաջ հայացք գցել երկրի գրառման ժամանակաշրջանի (շուրջ 150 թ.) Հայաստանի քաղաքական եւ սոցիալ-տնտեսական կյանքին՝ վարչատարածքային վերաբաժանումների էությունն ընկալելու համար:

Դեռեւս 66 թ. Մեծ Հայքի թագավորության գահին էր բազմել Պարթևստանի Արշակունյաց հարստության կրտսեր ճյուղը՝ հանձին Տրդատ Ա Արշակունու (52/61/66-76/88) թթ.): Արշակունիների հարստության ժամանակաշրջանում

Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում

քնական է, որ Մեծ Հայք պետք է ներմուծվել Պարթևական թագավորությունում գործող վարչատարածքային բաժանման հիմնական սկզբունքները: Այսպես՝ Մեծ Հայքի թագավորությունում հաստատվեց աշխարհների, այսինքն՝ նահանգների համակարգը: Փաստորեն՝ տեղի ունեցավ վարչամիավորների խոշորացում, քանի որ նախկին 120 վարչամիավորների փոխարեն ի հայտ եկան առնվազն 20 նոր վարչամիավորներ, որոնք էլ նկարագրված են Պտղոմեոսի երկում:

Ինչո՞վ կարող ենք հիմնավորել այն հանգամանքը, որ իսկապես տեղի է ունեցել նմանօրինակ փոփոխություն: Հարկ է նշել, որ Բ. ա.

2-րդ - Բ. հ. 1-ին դդ. անտիկ հեղինակների երկերում Մեծ Հայքում հիշատակվում են մի քանի տասնյակ փոքր վարչամիավորներ: Ի մասնավորի՝ պետք է առանձնացնել Պլինիոս Ավագի հաղորդած տեղեկությունները 120 վարչամիավորների («ստրատեգիաներ», «պրեֆեկտուրաներ») առնչությամբ: Ս. Երեմյանի կարծիքով՝ Պլինիոս Ավագը, որ իր «Բնական պատմություն» երկի Հարավարևմտյան ավարտել է 77 թ., Մեծ Հայքին վերաբերող հատվածները գրառել է մինչև Պարթևստանի Արշակունյաց պետության վարչաքաղաքական համակարգի ներմուծումը, քանի որ այդ ռաուսմասիրությունը եւ քարտեզի կազմումն իսկ կատարել է Հռոմի Կլավդիոս Կայսեր (41-54 թթ.) կարգադրությամբ: Պլինիոսն իր երկում հստակորեն նշում է. «Այն (Մեծ Հայքի թագավորությունը - Մ. Ա.) բաժանված է, ինչպես հայտնի է, 120 պրեֆեկտուրաների, որոնք կոչվում են ստրատեգիաներ, որոնց մի մասը երբեմնի առանձին թագա-

վորություններ էին՝ տեղական անվանումներով»:

Բ. Հարությունյանը բավական ուշագրավ միտք է արտահայտել, որ 120 ստրատեգիաներից է բխում հայոց այրուծիի 120 հազար մարտիկների թիվը (120 անգամ 1000): Ս. Երեմյանը նույնպես իրավացիորեն նկատում է, որ Մեծ Հայքի 120 ստրատեգիաները ռազմավարական միավորներ էին եւ հանդիսանում էին աշխարհացույցյան Մեծ Հայքի 15 աշխարհների շուրջ 190 գավառների նախահիմքը՝ հիմքում ունենալով երբեմն ցեղային, իսկ երբեմն էլ՝ աստիճանաբար ժառանգական դարձող գործակալությունների հետ կապված տիրույթներ: Միեւնույն ժամանակ նա նկատում է, որ Մեծ Հայքի թագավորությունում Արտաշեսյանների շրջանից մնացած եւ դրանից թագավորների գահակալության ժամանակաշրջանում զգալիորեն խարխված վարչաքաղաքական համակարգը Արշակունիների օրոք պետք է ենթարկվեր որոշակի փոփոխությունների, որոնք պետք է բխեին պարթևական տերության համակարգից: Ս. Երեմյանը չի բացառում նաեւ այն, որ 120 ստրատեգիաները կարելի է դասակարգել ըստ տարբեր կարգավիճակների, ինչը, իհարկե, անընդունելի հանգամանք պետք է դիտվեր կենտրոնացված հզոր իշխանության ձգտող Արշակունի արքաների համար: Նման պարագայում միանգամայն տրամաբանական է, որ 1-ին դ. երկրորդ կեսին Մեծ Հայքի թագավորությունում կատարվեր վարչատարածքային բաժանման համակարգի փոփոխություն:

Մեծ Հայքի թագավորության վարչատարածքային նոր բաժանումն առաջին անգամ նկարագրված է Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում: Հենց այս հանգամանքն է հայագիտության տեսանկյունից բացառիկ նշանակություն տալիս տվյալ աշխատանքին:

Ռաուսմասիրողի աչքից չի կարող վրիպել այն փաստը, որ 77 թ. ավարտված աշխատանքից 73 տարի հետո՝ մոտ 150 թ. գրառված երկում վարչամիավորների թիվը միանգամից 100-ով նվազում է: Ծիշտ է՝ Ս. Երեմյանը փորձում է ենթադրել, որ կարող է տարբերություն տեղ գտած լինել, եւ մենք երկու սկզբնաղբյուրների պարագայում էլ գործ ունենք 20 վարչամիավորների հետ: Նման կասկած նրա մոտ առաջացել է՝ հիմք ընդունելով այն փաստը, որ հելլենիստական պետություններում ստրատեգիաները շատ ավելի մեծ տարածք էին ընդգրկում, քան կարող էին ընդգրկել Պլինիոսի հիշատակած վարչամիավորները Մեծ Հայքում:

Գ. Սարգսյանի կարծիքով՝ Պտղոմեոսի հիշատակած 20 վարչամիավորներն իրենց ընդլայնված պետք է համապատասխանեին ոչ թե հարեւան Կապադովկիայում գոյություն ունեցած 10 ստրատեգիաներին, որոնք շատ ավելի մեծ տարածք էին զբաղեցնում, այլ՝ Սելեւկյան տերությունում ժամանակին գոյություն ունեցած սատրապիաների համակարգին, որն ընդգրկում էր շուրջ 30 սատրապություն՝ 72 հյուպարքոսություններով: Նա նաեւ ներկայացնում է Պլինիոսի «Բնական պատմության» քննական բնագրի հրատարակչի՝ Կ. Մայիոֆի կարծիքն առ այն, որ Մեծ Հայքի պարագայում 120 ստրատեգիաներ մատնանշելն իբրեւ թե հարյուրավորի նիշի հետագա աղավաղման արդյունք է եւ պետք է 20 կարդալ: Գ. Սարգսյանը գտնում է, որ նման եզրահանգումը ներդաշնակություն է մտցնում Կապադովկիայի եւ Մեծ Հայքի վարչատարածքային բաժանումների միջեւ: Իհարկե, բացառված չէ, որ նախկին 120 ստրատեգիաները միավորվելն նոր 20 վարչամիավորների մեջ:

Շարունակությունը՝ էջ 7

ՀՈՎՀԱՆՆԵՆ ԵՐԱԶ. ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Սկզբը՝ էջ 3

Բիչ են եղել վայելքի եւ երջանկության հուսադրող պահերը, բայց բոլորը է եղել բանաստեղծի սերը, որ վերջակետվել է Իդայի ամուսնությանը ու նրա երեխայի ծնունդով: Բանաստեղծություններից շատերն Իդայի գեղեցկությամբ, նրա հասակի ու հայացքի, մանավանդ հաճախ կապույտ ծովի ու երկնքի հետ համեմատված խոշոր ու բիլ աչքերով հմայված հեղինակի ու նրա սիրածի կենսագրության, ինչպես նաեւ նրա մի շարք գործերի ստեղծման պատմությանն առնչվող կարեւոր տեղեկություններ են պարունակում: Սիրո անանց վշտի խորությունը չափվում է մի բանաստեղծով՝ «Ա՛խ, բարոյ ունես այժմ քո գրկում», անկարելի դարձնում նրա շարունակությունը: Այս առիթով գրված բոլոր բանաստեղծությունների մեջ, սակայն, իր մարդկային խոր եւ առողջ կենսափիլիսոփայությամբ, զգացմունքների մաքրությամբ ու անկեղծությամբ, իր գեղարվեստական որակով առանձնանում է «Եզ տեսա, ավա՛ղ, քո մանկիկի հետ» սկսվածքով քերթվածը, որի տողերում ծրարված այրող զգացմունքներն անմիջաբար փոխանցվում են ընթերցողին:

Այս բանաստեղծության տողերում ու պատկերներում են ամփոփված սիրո կենսականորեն հզոր փիլիսոփայությունը, նրա վեհացնող, կատարելության ու մեծագործության մղող հսկայական ուժը, որը ոչ միայն բանաստեղծին, այլեւ առհասարակ մարդուն բարձրացնում է «իր աստղից»՝ իրենից ու առօրեականությունից եւ նորանոր մաքառումներով ու ձեռքբերումներով տանում դեպի դեռեւս չնվաճված բարձունքներ ու զագաթներ:

Ի-ին
Սիրով եկա ես աշխարհ,
Անցան ցնորք ու խոստում,
Սերս եղավ խելագար,
Երգս եղավ իմաստուն:

Եեզ տեսա, ավա՛ղ,
քո մանկիկի հետ,
Ասես իմ քայլող արցունքը
տեսա,
Մանկիկդ՝ սիրույս քայլող
վերջակետ,
Իր ոտքով հույսիս գերեզմանն
հասա:

Ա՛խ, չէ՛, մանկիկդ՝ արցունքս
քայլող,
Սիրույս պես անմեղ լույ հույսս
մարեց,
Մինչ սերս՝ որպես աստղիկը
փայլող,

Եեզ պիտի վառե, ինչպես ինձ
վառեց:
Պիտի հասցնեմ անուս
ականջիդ,
Պիտի մե՛ծ լինեմ, իմ աստղից
էլ մեծ,
Որ եեզ էլ վառեմ փառքով
իմ վճիտ,
Ինչպես ինձ, Իդա՛, դրժումդ
վառեց...

Պիտի ազգեագ ծիածան
հյուսեմ,
Դու ցեխն ես գցել ոչ թե խենթ
մի քար,
Այլ այն աղամանդն՝ աստղից էլ
վսեմ,
Որ գոհարների գոհարն էր,
գոհար:

Էլ չեմ հավատում սիրո
աստղծուն,
Ա՛խ, վերջին սիրո երգիչն եմ
վերջին,
Պիտի հասցնեմ ինձ
Նարեկացուն,
Որ չբրբբբա՝ «աշուղ եմ չնչին»:

Պիտի անճարս հանճարեղ
դառնամ,
Աստղերից պիտի կույսեր
ցած բերեմ,
Որ հեռվից հեռու վիշտդ
իմանամ,
Գեթ ականջովս խանդդ
համբուրեմ:



Որ լուսամուտից միշտ նայես
վրաս
Ամպերից թաքուն նայող
լուսնի պես,
Թեկուզ լուսնի պես իմ գիրկը
չգաս,
Միայն թե լսեմ, որ ինձ
կխանդես...
(Էջ 45-46)

Ծիշտ է, իրեն՝ «աստղերից էլ վառ աղամանդին», կենսական հանգամանքները «ցեխն ես գցել», բայց նրա մեջ սիրո եւ խանդի ուժգնությունից բոլորեցվել է մի ազնիվ «վրիժառություն»՝ իրենից

ավելի մեծանալու եւ բարձրագույններին հասնելու մարդկային ու բանաստեղծական ձգտում: Սերը վեհացնում է մարդուն եւ մղում մեծագործության, ներկա դեպքում՝ բանաստեղծին պարտավորեցնում հասնել բանաստեղծության Նարեկացիական անհասանելի բարձունքների:

Պիտի հասցնեմ ինձ Նարեկացուն:

Շարունակելի
Սամվել ՄՈՒՐԿՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

«...հարիում մեծագույն բաներն ա-
նարժեք են՝ առանց մեկի, որ ներկայա-
ցնում է դրանք: «Մեծ մարդիկ» է կոչում ժո-
ղովորդն այդ ներկայացնողներին»:
Ֆրիդրիխ Նիցշեի այս ուշագրավ դի-
տարկման հետ կարելի է հաճախ առճա-
կատվել կյանքի բազմաթիվ ոլորտներում:
Մեծ մարդիկ համայն մարդկությանը ներ-
կայացնում են իրականությունը, որը ոչ
միշտ էլ ոչ բոլորին է տեսանելի... Այդ իսկ
պատճառով բազմակի անգամ ավելի հե-
տաքերի է, երբ մեկն այդ մեծերից ներ-
կայացնում է ուրիշ մեծերի...»

Վերջերս լույս տեսավ բոլոր ժամանակ-
ների մեծագույն հայագետներից մեկի՝ Նի-
կողայոս Ադոնցի (1871-1942) գործերի ու-
շագրավ մի ժողովածու՝ «Երեւելի հայեր»
խորագրով: Ժողովածուի կազմողն է ԵՊՀ
Հայոց պատմության ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր, Գեորգյան հոգետո ճեմարա-
նի դասախոս Պետրոս Հովհաննիսյանը,
ով ներկայացվող հատորում գետնել է
Հայոց պատմության տասնյոթ գործիչնե-
րի մասին Նիկողայոս Ադոնցի պատմաքն-
նական ակնարկները: Ժողովածուն ունի
ժամանակագրական մեծ ընդգրկում՝ Զ. ա.
II դարում իշխած Արտաշես Ա-ից մինչեւ
XIX դարի առաջին կեսին ապրած հայ նոր
գրականության հիմնադիր Խաչատուր Ա-
բովյան:

Նիկողայոս Ադոնցի իր կենդանության օ-
րոք հրատարակել է բազմաթիվ մեծար-
ժեք ուսումնասիրություններ, որոնք այսօր
ել չեն կորցրել իրենց գիտական նշանա-
կությունը: Ավելին՝ նրա շատ աշխատանք-
ներ մնում են անգերազանցելի գլուխգոր-
ծոցներ իրենց ոլորտներում: Մեծ հայագե-
տի կյանքի կարեւոր նպատակներից էր
«Հայոց քննական պատմություն» բազմա-
հատորյալի ստեղծումը, որը, անտարա-
կույս, բազմաթիվ հարցերում նորույթ կլի-
ներ հայագիտության համար: Այն կդառ-
նար ակնավոր հայագետի ուսումնասի-
րությունների յուրօրինակ ամփոփում:
Սակայն, դժբախտաբար, նրան վիճակ-
ված չէր ավարտել այդ մեծ գործը: Մեծա-
տաղանդ գիտնականն իր մահկանացուն
կնքեց 1942 թ. հունվարի 27-ին՝ անա-
վարտ թողնելով բազմաթիվ գործեր:

Իբրեւ հարգանքի տուրք՝ Ն. Ադոնցի
մահվանից հետո՝ 1940-ական թվականնե-
րին, հրատարակվեց նրա ուսումնասիրու-
թյունների երկու հատոր: 1946 թ. Ֆրանսե-

ՄԵԾԸ ՄԵԾԵՐԻ ՄԿԱՒԻՆ

Նիկողայոս Ադոնցի «Երեւելի հայեր» ժողովածուի հրատարակության առթիվ



թ. - Զ. ա. 66 թ.» ուսումնասիրությունից
(թարգմ. Ֆրանսերենից՝ Վ. Ա. Պողոսյա-
նի): Այն պահպանվել էր Ն. Ադոնցի ան-
տիպ մնացած արխիվում եւ առաջին ան-
գամ լուս տեսավ վեցհատորյալի Դ հատո-
րում (Եր., 2009, էջ 432-512), ապա վերահի-
րատարակվեց «Տիգրան Մեծ» ժողովա-
ծում: Մեծ հիացմունքի արժանի այս ու-
սումնասիրությունը, գիտական անգե-
րագնահատելի արժանիքներից բացի,
կարող է դառնալ դասական օրինակ ա-
պագա հետազոտողների համար՝ ուսու-
ցանելով, թե ինչպես կարելի է փաստերի
հակասական, չափազանց միակողմանի
եւ երբեմն կեղծված տեղեկություններից
դուրս բերել ճշմարիտ իրականության
պատկերը:

Տիգրան Մեծի կերպարի աղոնցյան ըն-
կալումն ամբողջացնելու նպատակով կեն-
սապատումների ժողովածուի երկրորդ
բաժնում գետնված է Ն. Ադոնցի 1940
թվականին գրած եւ նույնպիսի ճակատա-
գիր ունեցած «Միհրդատ Եվպատոր եւ
Տիգրան Մեծ» նոթը (թարգմ. Ֆրանսերե-
նից՝ Ա. Շահումյանի):

Ժողովածուում ներկայացված երրորդ
մեծ անհատականությունը Գր. Լուսավո-
րիչն է, որի կերպարը քննարկված է Ն. Ա-
դոնցի դեռեւս 1928 թ. «Հայրենիք» ամ-
սագրում լույս տեսած եւ մի քանի վերահի-
րատարակություն ունեցած «Գրիգոր Լու-
սավորիչ եւ Անակ Պարթեւ» ուշագրավ
հոդվածում: Հոդվածում հեղինակը փոր-
ձում է որոշ ճշգրտումներ մտցնել Լուսա-
վորիչի մեզ ավանդված կերպարի պատ-
մական եւ առասպելաբանական շերտե-
րում:

Հայ նոր դարության հիմնադիրներ Մես-
րոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի կեր-
պարները ներկայացված են «Հայացած
Աստվածաշունչը եւ անոր պատմական
տարրությունը» մեծարժեք հրապարա-
կումով, որը 1936 թ. նախ իբրեւ գեկուցում
է ներկայացվել Սորբոնի համալսարա-
նում, ապա ունեցել մի քանի հրատարա-
կություններ՝ հայերեն, ֆրանսերեն եւ ռու-
սերեն:

Ճարտնականությունը՝ էջ 7



Հաւոն Մախյան

Սկզբը՝ էջ 4

Ներքին հանգերը, եզրահան-
գերը, հնչյունական կազմի նույ-
նաձայն ընթացքը ներդաշնակ
չափաբերմամբ ստեղծում են բա-
ռերի մի շարժում, ինչն իրոք երգ
է, մեղեդի: Սարյանի գրեթե բոլոր
գործերն ունեն խոսքի նուրբ, եր-
գեցիկ գզգզողություն: Միաձայն
մեղեդի է նրա պոեզիան՝ մեղմ,
հանդարտ, համաչափ ընթաց-
քով: Դա ստեղծում է անչափ
նկատելի խոսքի համաչափու-
թյուն՝ թե՛ հնչյունակազմի, թե՛
չափի, թե՛ շարահյուսական-ինչե-
րանգային ձեռնարկների միջեւ:
Նշված օրինակում ամբողջ բա-
նաստեղծությունը ներքուստ հա-

մամասնաբար բաժանվում է
նույնատեսակ կիսատողերի, ո-
րոնցում կրկնվում են նույն բառե-
րը, նույն հնչյունական ձեւերը,
նույն չափն ու շարահյուսական-
ինչերանգային կառուցվածքը:
Չգացումի, բանաստեղծական
մտածողության խիստ համա-
չափ դրսեւորումը կարգավորում
է պատկերային հյուսվածքի միա-
տեսակ ձեւավորումը, ինչի հետե-
ւանքով կիսատողը, տողը լրիվ
համընկնում են շարահյուսորեն
համեմատաբար ավարտուն
պատկերի հետ:

Հովհաննես Շիրազի կայուն
չափական կառուցվածքին բնո-
րոշ է կրկնաբերումների օգտա-

գործումը: Հիմնականում նա
ստեղծում է հնչյունական ու բա-
ռային կրկնաբերումներ: Հնչյու-
նականի մեջ մտնում է հանգն իր
տարբեր դիրքերով՝ ներքին
հանգ, վերջնահանգ, նաեւ առ-
ձայնային ու բաղաձայնային:

Ներքին հանգը հիմնականում
ծառայում է չափական առանձին
միավորների միջդադարային տե-
տողությունը, կայունությունը շեշ-
տելու նպատակին: Ներքին հան-
գը խոսքին հաղորդում է հնչյու-
նական ճոխություն, կիսատողի,
անդամների կամ հատածի չա-
փաբերման ամուր հնչողություն:
Այդ է պատճառը, որ շատերը
ներքին հանգը համարում են
խոսքին մեղեդայնություն հա-
ղորդելու հատկանշական տարր:
Բանաստեղծական այսպիսի կա-
ռուցվածքի դեպքում չափական
բաժանումների կայունացման
գործում անգնահատելի դեր ունի
մշտական ներքին հանգը: Այս
տեսակետից հիշատակելի է Շի-
րազի ամբողջ պոեզիան, այդ
թվում՝ «Չրույց Արագածի հետ»
բանաստեղծությունը.

Ու թեւ առած / սարել դառած /
սար եմ կանչել / ես մանկուց,
Շատ եմ վազել / ու երագել /
սարի անտառն / հինավուրց.

ՀԱՄԱԳԸ

Միրով անմեռ / Նայում եմ դեմ /
Արագածին / սպիտակ,
Ծով Շիրակի / գանձերով իմ /
լեռնաշխարհը / ոտքիս տակ...

Այսպիսի կառուցվածքների մեջ
մշտական ներքին հանգերը կա-
տարում են խոսքի չափական
կառուցվածքը ներքուստ տրո-
հող, կշռույթն ըստ դադարների
կարգավորող վճռական դեր:
Ներքին հանգի կայուն հնչեղու-
թյամբ կատարվող անդամների
բաժանումը համամասնական է,
ներդաշնակ է ու մեղեդայնությա-
նը նպաստող, միեւնույն ժամա-
նակ ներքին հանգով առանձնա-
նում են չափական միավորները,
նրանց ավարտն ազդարարվում
է ոչ միայն վանկաչափով, այլեւ
հնչյունական կրկնությամբ: Շի-
րազը սիրում է հնչյունական ճո-
խությունն ու լիաձայնությունը:
Այս առումով հրաշալի է նրա
«Գարնանամուտը».

Մանուշակներ ոտքերիս ու
շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու
գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու
արեւը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից
իջա ես քաղաք,-

Ու քայլեցի խայտալույծ ու շաղ-
տալով մայրերին
Մանուշակներ ու վարդեր ու
շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝
իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ,
գարուն տեսան նորաբույր...

Բանաստեղծությունը ներքին
հանգի, վերջնահանգի, հնչյունա-
կան ներդաշնակության համադ-
րական օրինակ է: Ներքին հանգը
հանդես է գալիս որպես տողի կշ-
ռույթային բաժանումներն ու հա-
տածը կարգավորող գործոն,
ներքին հանգի եւ տողավերջի
հանգի հնչյունական նմանությու-
նը շատ սերտ է: Երբեմն ներքին
հանգն ստեղծում է կիսատողի
ինքնուրույն չափական շարքի ա-
վարտվածության տպավորու-
թյուն, երբեմն այն տարրալուծ-
վում, դառնում է անկայուն՝ այս
դեպքում արդեն ուժգնացնելով
խոսքի բարեհնչյունությունը:
Ձայնական այս շեղ համանմա-
նությունները հարազատ են բա-
նաստեղծության շռայլ տրամադ-
րությանը եւ նրան հաղորդում են
զգալի երգեցիկ հնչերանգ:

Ճարտնական
Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր


Սկիզբը՝ էջ 5

Ս. Երեմյանը, ի վերջո, հակված է կարծելու, որ 120 թիվը ճիշտ է ընթերցված, եւ Պիլիոսը, կատարելով կայսեր հրամանը, առաջնորդվել է ռազմավարական ցանկացած միավոր հաշվառելու սկզբունքով: Այստեղ հարկ է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ Մեծ Հայքի թագավորության տարածքը ֆիզիկաաշխարհագրական տեսանկյունից խիստ կտրտված ռելիեֆ ունի՝ մի գործոն, որը բնականորեն կասեցնում է վարչամիավորների խոշոր լինելու հնարավորությունը՝ ի տարբերություն հարեւան հելլենիստական պետությունների: Փաստորեն՝ 1-ին դ. վերջին քառորդից մինչեւ 2-րդ դ. կեսը Մեծ Հայքի թագավորությունում վարչաքաղաքական լուրջ վերափոխություն է կատարվել: Այստեղ պետք է հստակեցնել կատարման ժամանակը՝ հաշվի առնելով երկու կարեւոր հանգամանք.

1. Պտղոմեոսի երկի շարադրման ժամանակ Մեծ Հայքի արքան Պարթևստանի կողմից առաջարկված եւ Զոմոի կողմից հաստատված անհատ պետք է լիներ, որպեսզի հաստատված պարթևական վարչահամակարգը տեւական, այսինքն՝ քարտեզագրական նկարագրության արժանի լիներ: Ժամանակային առումով համադրելի նմանօրինակ արքաներ են եղել Տրդատ Ա-ն (52/61/66-76[88] թթ.), Սանատրուկը (76[88]-110 թթ.) եւ Վաղարշ Ա-ն (117-140 թթ.):

2. Երկը պետք է գրառված լիներ Պտղոմեոսի աստղագիտական դիտարկումների (127-141

Մեծ Հայքը Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրություն» երկում



Աշխարհի քարտեզը՝ ըստ Պտղոմեոսի (ըստ Յոհաննես Ընիցերի 1482 թ. հրատարակությամբ)

թթ.) կամ դրանց հաջորդող ժամանակաշրջանում, քանի որ Պտղոմեոսի նկարագրություններում հսկայական կարեւորություն ունեն հենց աստղագիտական հաշվարկները: Միաժամանակ պետք է չմոռանալ, որ նմանօրինակ հաշվարկներ կատարելիս նա մշտապես նկատի է ունեցել Մարինոս Տյուրոսցու հաղորդած տվյալները, որոնք թվագրվում են մոտ 100/114 թ.:

Ս. Աղոնցը հակված է Մեծ Հայքի բաժանումը 120 ստրատեգիաների վերագրել Տրդատ Ա-

ին, քանի որ մինչեւ Պիլիոսը որեւէ հեղինակ, մասնավորապես՝ Ստրաբոնը, չի հիշատակում Մեծ Հայքում գոյություն ունեցող 120 վարչամիավորների՝ պրեֆեկտուրաների կամ ստրատեգիաների մասին: Նա գտնում է, որ Տրդատը պետք է վավերացներ այն վիճակը, որ գտել է երկրում:

Անշուշտ, Տրդատ Ա-ի եւ Սանատրուկի օրոք արդեն պետք է որ հաստատված լիներ աշխարհների համակարգը, սակայն, հնարավոր է, որ Պտղոմեոսը ներկայացրել է Վաղարշ Ա-ի օրոք առկա վարչատարած-

քային բաժանման համակարգը, քանի որ Պտղոմեոսը չէր կարող մինչ իր ուսումնասիրությունը ներկայացնել աշխատանքի արդյունքը: Պատահական չէ, որ արեւմտյան ուսումնասիրողները եւ Ս. Երեմյանը երկի հրապարակումը տեղադրում են մոտ 150 թ.: Սակայն այստեղ հրապարակ է գալիս այն հարցը, որ «Աշխարհագրություն» մեջ բացակայում է Վաղարշապատ քաղաքը, ինչը նշանակում է, որ Մեծ Հայքին վերաբերող հատվածը կարող էր գրառված լինել Վաղարշ Ա-ի գահակալման առաջին շրջանում, այն է՝ մինչեւ 130 թ.: Այսպիսով՝ երկու կարեւոր փաստ մեզ կարող է համոզել, որ գործ ունենք Վաղարշ Ա արքայի օրոք գոյություն ունեցած համակարգի հետ, քանի որ այստեղ առաջ են գալիս Մարինոս Տյուրոսցու երկի գրառման թվականի եւ Պտղոմեոսի՝ Վաղարշապատի մասին հիշատակության բացակայության հանգամանքները: Ամեն պարագայում ակնհայտ է, որ մենք գործ ունենք Արշակունյաց Հայաստանի 2-րդ դ. 1-ին կեսի վարչաքաղաքական համակարգի հետ:

Սակայն պետք է աջաբողջանել մի շատ կարեւոր փաստ. Մեծ Հայքի հարավային սահմանը նկարագրելիս Զյուսիսային Միջագետքի հետ սահմանագիծը ցույց տալիս նշվում է, որ այն անցնում

էր Հայկական Տավրոսի լեռներով, Եփրատի արմունկով (որով սահմանագատվում էր Կիլիկյան Տավրոսից), Եփրատ եւ Տիգրիս գետերով ու Նիփատես (Նապատ, Նապատական) լեռներով: Վերջիններս սահմանագատում էին Հայաստանը «Ասորեստանից»: Բանի որ վերջին սահմանագծում իրականում գործ ունենք Ադիաբենի հետ, ուստի, ըստ Ս. Երեմյանի, այստեղ հանդիպում ենք Տրայանոս կայսեր՝ 116 թ. նվաճումից հետո հռոմեացիների կողմից «Ասորեստան» պրովինցիայի մեջ մտցված Ադիաբենի հետ: Չնայած որ 117 թ. Հարրիանոս կայսրը հանձնեց Ադիաբենեն Պարթևական թագավորությանը, այնուհանդերձ պետք է նկատել, որ Պտղոմեոսը, փաստորեն, գրել է հաստատապես 117 թ. հետո գոյություն ունեցած վարչաքաղաքական բաժանման մասին, այլապես դժվար է պատկերացնել, որ նա գրում է Մեծ Հայքի անկախ թագավորության մասին եւ Նապատական լեռներին սահմանակից եւ նշում Ասորեստան պրովինցիան: Փաստորեն՝ մենք տրից գալիս ենք մեր այն եզրակացությանը, որ Պտղոմեոսը նկարագրում է Վաղարշ Ա-ի գահակալության առաջին շրջանում գոյություն ունեցած վարչաքաղաքական բաժանման համակարգը:

Շարունակելի
Միջադեպ ՄԱՆԿԱՎԱՅԱՆ

Սկիզբը՝ էջ 6

Հատուկ ուշադրության է արժանի Վասակ Սյունու կերպարի աղոնցյան մեկնաբանությունը: Հայագիտության մեջ այսօր էլ չմարած վարդան-վասակյան բանավեճին նվիրված հրապարակումներում, անտարակույս, առանձնանում է Ս. Աղոնցի «Մարգարեական Վասակը պատմաբանների դատաստանի առաջ» հոդվածը, որը 1903 թ. լույս է տեսել ռուսերեն, իսկ հետագայում՝ բազմիցս վերահրատարակվել է (հայերեն թարգմանիչներ՝ Շ. Դավթյան, Վ. Դիլոյան): Այստեղ եւս ակնհայտ է, որ լինում մեծ հետազոտողի մտքի սրությանը՝ փաստերի հակասական եւ միակողմանի շարադրանքի պայմաններում իրականության ճշմարիտ պատկերը վերականգնելու ունակությանը:

Ցավալի է՝ չի պահպանվել Ս. Աղոնցի՝ Մովսես Խորենացու նվիրված ուսումնասիրությունը, որը կրել է «Մեծագույն դեմքը հեռավոր հայ անցյալի» խորագիրը: Պահպանվել է միայն առաջին էջը, որն էլ հատորի կազմողը գետեղել է հենց ձեռագրով՝ իբրեւ մասուկ Ս. Աղոնցից:

Բյուզանդագիտական եւ հայ-բյուզանդական հարաբերությունների թեմաները կարեւոր տեղ են գրավել Ս. Աղոնցի ուսումնասիրությունների մեջ, ուստի եւ պատահական չէ, որ ժողովածուում ընդգրկված են Բյուզանդիայում աչքի ընկած մի շարք ակնաւոր հայ գործիչներ: Դրանցից առաջինն Արտավան Արշակունին է, Ս. Աղոնցի բնորոշմամբ՝ նա «առաջին հայն էր, որ ձեռք կարկառեց կայսերական թագին... Այս համարձակությունը եղավ պատմական Հայոց մեծ եւ հոյակապ վերելքի Բյուզանդիայում» (էջ 162): «Արտավան Արշակունի» հոդվածն առաջին անգամ լույս է տեսել «Հայրենիք» ամսագրում 1929 թվականին:

Այս շարքի երկրորդ կարկառուն ներկայացուցիչը Բյուզանդիայի կայսրուհի դար-

Մեծ մեծերի սպան

Նիկողայոս Աղոնցի «Երեւելի հայեր» ժողովածուի հրատարակության առթիվ

Ճած Թեոդորա Մամիկոնյանն է, որին նվիրված «Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա» ծավալուն ուսումնասիրությունը Ս. Աղոնցը հրատարակել է «Հայրենիք» ամսագրի 1930 թվականի մի քանի համարներում: Այն հետագայում ունեցել է վերահրատարակություններ (ներկայացվող ժողովածուում այն զբաղեցնում է շուրջ 100 էջ):

Հաջորդը Վարդ Մամիկոնյանն է՝ Թեոդորա կայսրուհու եղբայրը, «պետական առաջնակարգ անձ, լուսավոր դեմք», որի «երկու գործերը՝ ժողովրդական լուսավորություն եւ հոգեւոր ազատություն» եկեղեցու անկախության մեջ, բավական են, որ պատվի տեղ տրվի նրա անվան պատմության մեջ» (էջ 260, 292):

Ժողովածուի հաջորդ կյուրը 1930 թ. լույս տեսած «Հայերը բյուզանդական գիտության մեջ» աշխատությունն է (որը հետագայում ունեցել է հայերեն եւ անգլերեն վերահրատարակություններ): Այն Ս. Աղոնցը հիմնականում նվիրել է IX դարի ակնավոր գործիչ Լեւոն Իմաստասերին:

Բյուզանդիայի պատմության մեջ նոր դարաշրջանի սկիզբ դրեց Հայկական կամ Մակեդոնական դինաստիայի հիմնադիր Վասիլ (Բարսեղ) I-ը: Նրա կերպարի բացահայտմանն է նվիրված «Վասիլ Հայազն (Մեծագործ կայսր. 867-886)» ուսումնասիրությունը, որը նախ լույս է տեսել 1931 թ. «Հայրենիք» ամսագրում, ապա՝ քանիցս վերահրատարակվել հայերեն, անգլերեն եւ ֆրանսերեն:

Հատուկ ուսումնասիրությամբ Ս. Աղոնցն անդրադարձել է մեր միջնադարյան պատմության ամենաակնառու դեմքերից

Աշոտ Բ Երկաթ արքայի գործունեությանը: Ժողովածուի հաջորդ կենսապատմականարկը՝ «Աշոտ Երկաթ. Թագավոր Հայոց. 913-929», նախ լույս է տեսել ֆրանսերեն (Բոյուսել, 1932 թ.), ապա՝ արեւմտահայերեն (թարգմ.՝ Զ. Պեպպերյան, 1955 թ.) եւ արեւելահայերեն (թարգմ.՝ Ա. Շահումյան, 2012 թ.):

Հայ իրականությանը քիչ ծանոթ դեմքերից է Սամուել Հայկազնը՝ X-XI դարերում ապրած հետաքրքիր մի անհատականություն, որ զբաղեցրել է Բուլղարիայի գահը: Նրան է նվիրված Ս. Աղոնցի «Բուլղարների արքա Սամուել Հայկազն» աշխատությունը, որը ֆրանսերենով լույս է տեսել Բոյուսելում 1938 թ., իսկ հայերեն՝ վեցհատորյակի Ե հատորում (Ե., 2012, Ա. Շահումյանի թարգմանությամբ):

Ժողովածուի վերջին ակնարկը նվիրված է Կիլիկիո Հայոց պետության հիմնադիր Ռուբեն Ա-ին: Ս. Աղոնցի «Ռուբենյանների նախահայրը» ուսումնասիրությունն առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերեն 1935 թ. Բոյուսելում, վերահրատարակվել Լիսաբոնում 1965 թվին, ապա՝ արեւմտահայերեն (թարգմ.՝ Զ. Պեպպերյան, 1954 թ.) եւ արեւելահայերեն (թարգմ.՝ Ա. Շահումյան, 2012 թ.):

Եվ վերջին ակնարկը, որով ավարտվում է ներկայացվող ժողովածուն, նվիրված է հայ նոր գրականության հիմնադրին, ավելի ճիշտ՝ նրա առեղծվածային վախճանի խնդրին: Ս. Աղոնցի «Խաչատուր Աբովյանի վախճանը» ակնարկը նախ լույս է տեսել 1933 թվականին Փարիզում հրատարակվող «Վեմ» հանդեսում, իսկ հետագայում ունեցել է մի քանի վերահրատարակություն:



Բացառիկ հետաքրքրությամբ ընթերցվող ժողովածուն բաղկացած է 490 էջից, ունի բարձրաճաշակ ձեւավորում եւ բարձրակարգ տպագրություն, ինչի համար պետք է մեծ զրկատանքի արժանացնել ինչպես ժողովածուն կազմող Պետրոս Զովհաննիսյանին, այնպես էլ խմբագիր Ալբերտ Իսոյանին, «Հայագիտակ» հրատարակչությանը եւ տպագրության մեկենաս Սուրեն Խաչատրյանին:

Արտակ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր

Ժամանակակից հնդկահայոց համայնքի լեզվական առանձնահատկությունները

Սկզբը՝ էջ 3

Բառագործության համակարգում հնդկահայերենն էականորեն տարբերվում է ե՛լ ժամանակակից հայերենից, ե՛լ պարսկահայերենից: Այս լեզվակիրները չունեն առօրյա բառապաշարի այն մեծ ամբարը, որն ունի հայաստանաբնակ հայը: Դա պայմանավորված է հայերենի՝ ոչ հաճախ գործածական լինելով: Հնդկաստանի փոքրաթիվ հայությունն ապրում է աշխատում է օտարալեզու միջավայրում: Այս ամենին եթե ավելացնենք այն փաստը, որ ավագ սերնդի ներկայացուցիչներից մնացել են լոկ միայնակ տարեցներ, որոնք առօրյա-ընտանեկան միջավայրում հայերեն խոսելու անհրաժեշտություն չունեն, իսկ երիտասարդները հիմնականում ամուսնացած են օտար լեզվակիրների հետ, եւ նրանց հաղորդակցման առօրյա լեզուն անգլերենն է կամ բենգալերենը, ապա բնական է դառնում հայերեն սակավ բառերի կիրառությունը: Եվ, բացի այս, նկատելի են սխալ բառագործության բազում օրինակներ, որոնք նույնպես բացատրվում են անգլերենի անմիջական ազդեցությամբ: Այսպես օրինակ՝ ժամանակակից հայերենում «սառը» նշանակում է նվազ ջերմաստիճան ունեցող («ժամանակակից հայերենի բացատրական բառարան», Երևան, 1980, հ. 3, էջ 272), ոչ տաք, իսկ «ցուրտ» նշանակում է բավականաչափ ջերմություն չունեցող, ջերմությունից զուրկ (միջավայրի մասին) (*Նույն տեղում, էջ 568*): Անհայտ է, որ ժամանակակից հայերենում այս երկու բառերի միջև կա իմաստային նրբերանգ, եւ նրանք չունեն հավասարազոր գործածություն: Անգլերենում այս երկու բառերին համապատասխանում է «cool» բառը: Եվ եթե անգլերենում սովորական է «cool water» արտահայտությունը, ապա «ցուրտ ջուր» կապակցությունը սխալ ու զավեշտավոր է ժամանակակից հայերենում, այնինչ՝ գործածական է հնդկահայ շրջանում: Նմանատիպ օրինակները բազմազան են: Այսպես օրինակ՝ «լավ» բառը ժամանակակից հայերենում ունի բազում իմաստներ՝ որակով, բարեկիրթ, ուրախ, ազնիվ, առողջ, տաղանդավոր եւ այլն (*Նույն տեղում, հ. 2, էջ 382*): «Լավիկ» բառը գործածվում է սիրունիկ, անուշիկ իմաստով (*Նույն տեղում, էջ 384*): Բայց երբ սովորական «ինչպե՞ս էք» հարցին ի պատասխան հնչում է «շնորհակալ եմ, լավ եմ» կապակցությունը՝ «լավ եմ»-ի փոխարեն, արդեն ծիծաղաշարժ է:

Անցնենք քերականական համակարգին: Այստեղ էական տարբերություններ չկան, եղած բոլոր փոփոխություններն էլ բացատրվում են անգլերենի անմիջական ազդեցությամբ:

Այսպես, օրինակ՝ անգլերենում *in* նախդիրն ունի *մեջ, ներս* իմաստները: Եվ քանի որ անգլերենը չունի հոլովի քերականական կարգ, հիշյալ իմաստներում միշտ գործածվում է վերոնշյալ նախդիրը: Այս հարցում հայերենը նույնպես հարուստ է: Օրինակ՝ մենք ունենք ներգոյական հոլով, որը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը (սենյակում, քաղաքում եւ այլն): Անգլերենում այս իմաստն արտահայտելու համար գործածվում է *in* նախդիրը (*in the room, in the city*): Այս օրինակաբանությամբ հնդկահայ տարբերակում գործածվում է միայն մեջ կապը՝ գոյականի անհնչյունափոխ սեռական հոլովի հետ՝ քաղաքի մեջ, ջուրի մեջ, սենյակի մեջ եւ այլն:

Դեռ ավելին՝ գործածվում են նաեւ *ներս* կապի եւ գոյականի բացառական հոլովով կապակցություններ. նույն իմաստն արտահայտելու համար՝ քաղաքից ներս, սենյակից ներս եւ այլն: Այս դեպքում գործ ունենք համաբանության հետ: Եթե *դուրս* կապի հետ գործածվում է բացառական հոլովով գոյականը (քաղաքից դուրս, սենյակից դուրս), նույն կապակարգով էլ գործածվում է *ներս* կապը:

Քերականական առանձնահատկություններից է նաեւ հնդկահայ տարբերակում շարադասության կաշի, ոչ ազատ լինելը: Ժամանակակից հայերենում շարադասությունն ազատ է եւ պարտադիր չէ ենթակաստորոգյալ կաղապարը: Նախադասության ենթական կարող է գործածվել նաեւ ստորոգյալից հետո՝ հատուկ ոճական նպատակներով: Սակայն անգլերենում սա շատ կարեւոր առանձնահատկություն է. նախադասությունները, որպես կանոն, ունենում են ենթակա-ստորոգյալ կաղապարը, ինչի հետեւանքով էլ հնդկահայ բանավոր խոսքում բոլոր նախադասությունները կառուցվում են այս կաղապարով: Դեռ ավելին՝ անգլերենում բայի խոնարհումն արտահայտվում է միայն դերանվամբ ու բայով՝ առանց բայական հատուկ վերջավորության (*I read, you read*), մինչդեռ ժամանակակից հայերենում ենթակա-դերանունն անդադար գործածելու հարկ չկա, մանավանդ առօրյա-խոսակցական լեզվում այն համարյա չի կիրառվում, քանի որ բայի խոնարհման վերջավորություններն ու օժանդակ բայն իր խոնարհված ձևերով արտահայտում են նաեւ դիմային հատկանիշը («ինչպե՞ս ես». պարզ է՝ արդեն խոսքն ուղղվում է խոսակցին, եւ պարտադիր չէ *դու*-ի կիրառությունը): Հնդկահայ տարբերակում, սակայն, անգլերենի ազդեցությամբ դերանուն ենթական պարտադիր գործածվում է՝ «դու գրո՞ւմ ես», «նա խոսո՞ւմ է» եւ այլն:

Շարահյուսական մեկ այլ առանձնահատկություն է բարդ նախադասությունների սակավ կիրառությունը: Համադասական նախադասությունների դեպքում, որպես կանոն, կապակցման միջոց են հիմնականում *եւ, ու* միավորիչ եւ *քայք* հակադրական շաղկապները, իսկ ստորադասական նախադասությունների դեպքում՝ միայն առօրյա-խոսակցական շաղկապները: Մեր լեզուն հարուստ է շաղկապներով, որոնք թեեւ կարող են կազմել հոմանշային շարքեր, սակայն ոճականորեն տարբերվում են (*տե՛ս Ա. Պողոսյան, Խոսքի մշակույթի եւ ոճագիտության հիմունքներ, գիրք 2, Երևան, 1991, էջ 231*):

Այսպիսով՝ հայոց լեզվի հնդկահայ խոսվածքի հիմքում ընկած է մեր լեզվի պարսկահայ տարբերակը: Հայկական դպրոցներում ու ճեմարաններում մինչեւ 1999 թ. դասվանդել են Պարսկաստանում հրատարակված հայկական դասագրքերով, ինչն էլ ավելի է ամրապնդել պարսկահայերենի դիրքերը: Սակայն երբ ճեմարանի կառավարումը 1999 թ. հանձնվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հայոց լեզվի դասավանդումն ընթացավ ժամանակակից հայոց լեզվով եւ Հայաստանում հրատարակված գրականությամբ: Այսուհանդերձ՝ լեզուն ենթարկվում է բազում փոփոխությունների եւ ազդեցությունների, քանի դեռ այն կենդանի է եւ գործածվում է թեկուզ փոքրաքանակ մարդկանց կողմից:

Լիլիթ ՉԱՅԱՍՏԱՆ

Կրթարարակվել է

Սուր Աթոռ Սբ Էջմիածին (2016 թ.)

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ հիմնականում «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի աջակցությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել.

1. Ս. Արեւշատյան եւ Կ. Միրումյան, «Հայ միջնադարյան փիլիսոփայություն»:
2. Մեսրոպ վարդապետ Պարսամյան, «Լինել Աստված (մարդու աստվածացման եռաստիճան ճանապարհն ըստ Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի վարդապետության)»:
3. «Մյուռնոսիությունը ԺԹ-ԻԱ դարերում» փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու: Գիրքը տպագրվել է ամերիկաբնակ տեր եւ տիկին՝ Տիրան եւ Քնար Եղբայրյանների մեկենասությամբ:
14. Հայոց Հայրապետները սրբալույս Մյուռնոսի մասին գունագարդ գրքույկը (կազմ. Շահե վրդ. Անանյանը):
15. Անահիտ Պարսամյան, «Պողիքտոս» (թատերագրություն):
16. Տեր-Մկրտչյան, «Ս. Մյուռնոսի օրհնությունը» (հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով):
17. Մատթեոս վարդապետ Զուղայեցու քարոզները (ուսումնասիրություն եւ քննական բնագրերը, կազմ. Խաղ ջին. Ղազարյանը):



4. Սբ Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն մարգարեութեան Երեմիայ» խմբագիր մեկնությունը՝ աշխատասիրությամբ Հակոբ Զյոսեյանի:
5. Դավիթ Գյուրջիսյան, «Հայոց լեզու. խոսքարվեստի դասագիրք»:
6. Հրաչ սրկ. Սարգիսյան, Վարդան սրկ. Ասլանյան, «Կենսաէթիկայի հիմնահարցեր»:
7. «Արարատի ժառանգություններ» շարքից «Զարոգգիրք (հեղինակային քարոզներ)» ժողովածուի առաջին հատորը՝ Հասմիկ Մելքոնյանի աշխատասիրությամբ:
8. Վահրամ Եպիսկոպոս Մանկունի, «Գեորգ Դ. եւ իւր ժամանակը (1812-1882)» երկը: Այն նախապես հրատարակվել էր Փարիզում՝ «Վեմ» ամսագրի 1933-1937 թթ. համարներում: Գեորգյանի հոգեւոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակին նվիրված այս հրատարակությունը աշխատասիրել եւ ծանոթագրել է Գեորգյան ճեմարանի դասախոս, պ. գ. թ., դոցենտ Պետրոս Հովհաննիսյանը:
9. Մայր Աթոռ Սբ Էջմիածնի 2016 թ. պաշտոնական օրացույցը՝ կազմված Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Եպս Աջապահյանի կողմից:
10. 2016 թ. սեղանի օրացույցը: Ամենօրյա ժամատախտակների զուգահեռ՝ այն բացատրություններ է տալիս բոլոր տոների եւ սրբոց հիշատակության օրերի վերաբերյալ:
11. Է. Գյուրջյան, «Զո հավատը քեզ փրկեց» (վկայություններ):
12. Հ. Վարդան Հացունի, «Պատմութիւն Հայոց աղօթամատոյցին», նվիրված է Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակի տարեկիցին:
13. Հ. Մանանդյան, Հր. Աճառյան, «Հայոց Նոր Վկաների» արեւելահայերեն թարգմանությունը:
18. Վահան վրդ. Բաստամեանց, «Ամուսնութիւնը ըստ հայոց եկեղեցական իրաւաբանութեան, եկեղեցական իրաւագիտութիւն» (կազմ. Ազատ Բոգոյանը):
19. Հակոբ պատրիարք Նալյան, «Մեկնողական աղոթք սրբալույս յուր մյուռնոսի մասին» գրքի գրաբարից արեւելահայերեն թարգմանությունը (թարգմ. Յուլիա Հարությունյան):
20. Սբ Էջմիածինը. թանգարան բաց երկնքի տակ, կազմ. Արարատ ջին. Պողոսյանը):

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՉԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 28.12.2015 թ.
Տպաքանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ